

Ս Մ Բ Ա Տ Բ

Մարզիս Ա-ի որդին էր Սմբատ Բ, որուն մայրն հաւանարար Սթէն էր : 1215ին ան իր հօրը երկրորդ կնոջ՝ Ազուտի հետ իր հօր ի յիշատակ խաչքար կը կանգնէ, ուր կ'ըսէ . «Ի ՈԿԴ (1215) թվիս կանդնեցաւ խաչս յիշատակ . . . եւ որդի նորա Սմբատ եւ ամուսինն Ազուտ ետուն ի Մղարդ զԱբլասաղանց հայրենիքն ամենայն շահ ու զենով յԱստուածածինիս եւ Ո (40) աւրալար հող» (Յիշատ . 3) :

Սմբատ Բ-ի կնոջ անունը անձանօթ կը մնայ, սակայն ծանօթ են իր երկու որդիները՝ Համլիկ եւ Սաղուն :

Մ Ա Ր Զ Պ Ա Ն Բ

Մարզիս Ա-ի որդին էր անոր առաջին կնոջմէն՝ Սթէն, ինչպէս որ կը յիշուի Սանահինի վանքին արձանագրութեան մէջ . «Ի թուի . ՈԿ (1211) կամաւն Աստուծոյ ես՝ Մարծպան, որդի Սարգսի, թոռն Աւագ Համազասպանց . . . իմ մաւրն Սթէ հողոյն . . . » (Յիշատ . 11) : Մարզպան Բ իր մօրը հետ կը յիշէ նաև Սթուն՝ առանց բերու Սթունին հետ ինչ պղծակցական կապ ունենալը : Հաւանարար սխալած պիտի չըլլանք եթէ Սթունը նկատենք Մարզպան Բ-ի քոյրը, թէեւ միայն այս յիշատակութիւնը ունինք անոր համար :

Մարզպան Բ 1221ին խոշոր շինարարութեան կը ձեռնարկէ, ցոյց տալով որ նիւթապէս ալ աւելի բարեկեցիկ է յաջող էր իր նախորդներէն : Բարձրաքաշի ժամատան ՈՀ (1221) թուականաւ արձանագրութեան մէջ կ'ըսէ . « . . . Ես Մարծպան որդի Սարգսի (Ա) թոռն Համազասպանց յազդէ Մամիկոնեանց շինեցի զվանքս եւ զամէն եկեղեցիքս իմ հալալ արդեանց եւ արարի ինձ տուն եւ զերեզմանատեղի եւ զաւկաց իմոց եւ արզականաց » : Կ'աւելցնէ որ պատարագ ըլլայ իրեն եւ «Մամաքան ամուսնո իմո» հողոյն համար :

Գարձեալ 1221ի արձանագրութեան մէջ կը յիշէ որ Բարձրաքաշի նորաշէն եկեղեցւոյն կալուածներ կու տայ եւ կ'ըսէ . «Չարդարեցի մեծագին պատուական սպասիւք խաչիւք եւ մասամբք եւ զբէնաւք» (Յիշատ . 12) :

Նոյն Գսեղի Բարձրաքաշի մէջ ՈԶԸ (1239)ին Մարզպան Ա-ի եղբոր որդին Համլիկ կը թողու արձանագրութիւն մը ուր կ'ըսէ . « . . . մասուն մի գոր յիմ յանուն շինեցի եւ ետ ինձ հաւրեղայր իմ Մարզպան որ անխափան լինի պատարագն որ անդ լինի . . . » (Յիշատ . 14) :

Մարզպան ըրած է նուիրատուութիւն Գոշայ վանքին, ուր անթուական եւ ոչ ամբողջական արձանագրութեան մը մէջ կ'ըսէ . «Ես Մարզպան իշխան եւ որդիք իմ Ասլան բէգ եւ Գրիգոր միտրանեցաք Սուրբ Աստուածածնիս . . . » (Յիշատ . 16), կալուած կը նուիրէ պատարագ ստանալու համար :

Թուին ՈՂԹ (1250) գուցէ զեռ ողջ էր Մարզպան Բ : Յովհաննափանքի ժամատան հիւսիսային պատին վրայ կայ արձանագրութիւն մը . « . . . Ես Բուրդ՝ որդի Վաչէի եւ ամուսին իմ Սորիշահ՝ զուստր Մարծպանա եւ Մամքանա . . . », որեւէ բան չըսեր անոնց մեռած ըլլալուն մասին : Նոյն արձանագրութեան մէջ կը խնդրուի « . . . Ժ (10) ինձ՝ Գրդիս եւ Ժ (10)՝ Սորիշահի : Որչափ կենդանի ենք՝ Ժ (10) : Վաչէի եւ Ժ (10) : Մամքանա, եւ յետ ելից մեր . . . » (Յիշատ . 17) : Հոս յիշուած Մամքանը Բուրդի մայր եւ Վաչէի կինն է :